

Տեղեկատվություն

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2016թ-ի փետրվար ամսին կատարած աշխատանքները

Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 3 ծառ, որոնց համար կազմվել է 2 անտառախախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: <<Դիլիջան>> ազգային պարկին հարակից գյուղական համայնքներում անց են կացվել ժողովներ՝ ապօրինի ծառահատումների, անասունների արածեցումների, ապօրինի շինությունների, հողազավթումների, որսագողության և հրդեհների դեմ պայքարելու նպատակով:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել են ֆենոլոգիական ուսումնասիրություններ, ձնծաղիկի և դրա տարատեսակների ծաղկման ուսումնասիրություն: Մշակվել են դասընթացների համար նախատեսված հետևյալ թեմաները՝ <<<<Դիլիջան>> ազգային պարկի տնտեսապես արժեքավոր դեղաբույսերը>>, <<Դիլիջան>> ազգային պարկի առավել տարածված մեղրատու բույսերը>>:

Փետրվար ամսին Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունների գովազդման նպատակով իրականացվել են տեղեկատվական թերթիկի նախապատրաստման աշխատանքներ: Էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ են կատարվել Դիլիջան քաղաքում գործող <<Մագնիտ>> և <<Դիլիվիլա>> հյուրատներ: Նշված հյուրատներում ներկայացվել են <<Դիլիջան>> ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, տրամադրվել են տեղեկատվական նյութեր՝ գրքույկներ, բուկլետներ:

16.02.2016 թվականին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Ա. Գրիգորյանի մոտ քննարկվել է <<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2015 թվականի ընթացքում կատարված ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը:

<<Դիլիջան>> ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար անց է կացվել մրցույթ վառելիքի ձեռք բերման համար: Մրցույթներ են հայտարարվել սեղմված բնական գազի ձեռք բերման և տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռք բերման համար: